Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. փետրվարի 21-ից հետո ձեռք բերված հիմնական միջոցների հաշվառման և վերաբաշխման վերաբերյալ

2020 թվականի փետրվարի 21-ից մինչև ապրիլի 20-ը ընկած ժամանակահատվածում համայնքի ֆոնդային բյուջեի միջոցների հաշվին ձեռք է բերվել ընդհանուր 10 376 720 դրամի չափով հիմնական միջոցներ, նույն թվում համայնքի մուտքերում տեղադրված տեսահսկման համակարգ՝7230.0հազար դրամ արժեքով, քաղաքապետարանի աշխատողների հաճախումների հսկման համակարգ՝ 540.0հազար դրամ արժեքով, գրասենյակային գույք՝ 941.0 հազար դրամ արժեքով և թիվ 2 մանկապարտեզի համար գույք 1665.72 հազար դրամ արժեքով:

Ձեռք բերված հիմնական միջոցները հաշվառվել է գույքի հաշվառման մատյաններում, ներառվել է հաշվապահական հաշվեկշռում որպես հիմնական միջոց:

Ստացված հիմնական միջոցները անհրաժեշտ է բաշխել ըստ անհրաժեշտության՝ համայնքի մուտքերում տեղադրված տեսահսկման համակարգը, քաղաքապետարանի աշխատողների հաճախումների հսկման համակարգը և գրասենյակային գույքը՝ Մասիսի քաղաքապետարանի աշխատակազմ ՀԿՀ-ին:

Թիվ 2 մանկապարտեզի համար ձեռք բերված գույքերը հաշվեկշռից- հաշվեկշիռ հատկացնել մանկապարտեզին, որից 25000դրամից ավել արժեքով ձեռք բերված գույքերը՝ օգտագործման իրավունքով որպես հիմնական միջոց, իսկ մինչև 25000 դրամ արժեքով գույքերը հատկացնել մանկապարտեզին սեփականության իրավունքով /ցանկը հավելված 1-ում/:

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն. Սահակյան